

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Գյումրու Միջազգային Կարմիր խաչի անվան պոլիկլինիկա» ՓԲԸ-ն հայտարարում է մրցույթ բուժքույր վիճակագրի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար:

ՀՀ Կառավարության 2011թ-ի հունիսի 10-ի թիվ 22 արձանագրային որոշման համաձայն մրցույթին կարող է մասնակցել գրական հայերենին տիրապետող Հայաստանի Հանրապետության 18 տարին լրացած քաղաքացին, ինչպես նաև այն օտարերկրյա քաղաքացիները, ովքեր Հայաստանի Հանրապետությունում ունեն կացության կարգավիճակը հաստատող փաստաթուղթ և աշխատանքի թույլտվություն:

Մրցութին մասնակցելու համար միջին բուժանձնակազմին ներկայացվող

- 1) պարտադիր պայմաններն են՝
ա. միջին մասնագիտական կրթության առկայություն
բ. բժշկական էթիկայի կանոնների իմացություն,
- 2) լրացուցիչ պայմաններն են՝
ա. համակարգչով աշխատելու ունակություն.
բ. առնվազն մեկ օտար լեզվի իմացություն,
գ. տրամաբանելու և տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն:

Թափուր տեղի հավակնորդի կողմից ներկայացվում է՝

- 1) դիմում.
 - 2) մեկ լուսանկար 3x4 չափի.
 - 3) քաղվածք աշխատանքային գրքույկից (աշխատանքային ստաժ ունենալու դեպքում),
 - 4) ինքնակենսագրություն.
 - 5) անձնագրի, միջին մասնագիտական կրթության ավարտական փաստաթղթի (դիպլոմի), վերապատրաստման վկայականի (դրա առկայության դեպքում) պատճենները,
 - 6) օտարերկրյա քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում կացության կարգավիճակը հաստատող փաստաթուղթ և աշխատանքի թույլտվություն:
- Մրցույթին մասնակցելու համար դիմած քաղաքացին անձնագրով /անձը հաստատող այլ փաստաթղթով/, նախատեսված փաստաթղթերի բնօրինակներով և պատճեններով անձամբ ներկայանում է «Գյումրու Միջազգային Կարմիր խաչի անվան պոլիկլինիկա» ՓԲԸ-ի կադրերի բաժին:

Փաստաթղթերն ընդունվում են ամեն օր ժամը 10:00-16:00-ը, բացի շաբաթ և կիրակի օրերից

(ՀՀ Շիրակի մարզ, ք. Գյումրի, «Անի» թաղամաս 5 փողոց 8):

Փաստաթղթերի ընդունման վերջին ժամկետն է 2019 թվականի սեպտեմբերի 24-ը:

Բուժքույր վիճակագրի պաշտոնը զբաղեցնելու համար մրցույթը կանցկացվի 2019 թվականի սեպտեմբերի 26-ին ժամը 14:00-ին «Գյումրու Միջազգային Կարմիր խաչի անվան պոլիկլինիկա» ՓԲԸ-ի մասնաշենքում:

Մրցույթին մասնակցել ցանկացող քաղաքացիները լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող են դիմել «Գյումրու Միջազգային Կարմիր խաչի անվան պոլիկլինիկա» ՓԲԸ-ի աշխատանքային խմբին (ՀՀ Շիրակի մարզ, ք. Գյումրի, «Անի» թաղամաս 5 փողոց 8, հեռ. 6-17-60, 6-14-86):

Միաժամանակ տեղեկացվում է, որ մրցույթին մասնակցելու համար քաղաքացիների ներկայացրած փաստաթղթերը հետ չեն վերադարձվում: